

–Սա արժոն բռնելուս պէս գլխուդ կիջեցունեմ հա՛, իշու թոռ. իրարու հետ քաղաքավարութեամբ խօսեցէք ըսի, աւանա՛կ, գոմէշ... գէ՛շ ըսի:

Թաղականի մէջ մէկ հոգի կայ միայն, որ Ս. Զատկի կամ Ծնունդի օրերը առատօքառատ *ժամուց* կու տայ իւր քսակէն. մնացածներն ալ առատօրէն *ժամուց կու* տային, բայց թաղականի սնտուկէն կու տային ժամանակաւ. իսկ հիմայ, որ թաղին մէջ իմացուած է սնտուկէն *ժամուց* տրուիլը, Ս. Զատկի եւ Ծնունդի օրերը յիշեալ թաղականներն եկեղեցիէն կանուխ կ'ելնեն կ'երթան, որ չստիպուին *ժամուց* տալ իրենց քսակէն...

Եթէ հարցուի, թէ ի՛նչ է թաղական խորհրդոյ տեսած գործը՝ կպատասխանենք, որ անոր գլխաւոր գործն է չորս կալուածներէ գոյացած եկամուտը հաւաքել եւ մէկ լուսարարին ու երկու ժամակոչին ամսական վճարել: Եթէ լուսարարին ու ժամակոչին հրահանգ տրուի, որ իրենց ամսականներն երթան այդ կալուածները վարձողներէն առնեն ամսէ ամիս՝ թաղականներուն գործ չմնար: Զմոռնանք ըսել սակայն, որ թաղականն երկու ամիսէ ի վեր թաղին վարժարանին հոգաբարձութիւնն իւր վրայ առած է... Տէր Աստուած ընդունելի արասցէ...: Ելնող հոգաբարձութիւնը, կ'ըսեն, ողջ ըլլայ, վարժարանները բաւական կործանեց եւ հեռացաւ: Յիշեալ հոգաբարձութեան անդամները երկու տարի առաջ Ս. Ստեփանոսի տօնախմբութեան օրը չորս տակառ օղի եւ ութը տակառ գինի բերել տալով վարժարանը՝ հոն սեղան շտկեցին եւ մինչեւ երեկոյ այնքան օղի եւ գինի խմեցին, որ չկրցան քալել եւ տակառի պէս գլտորուելով կրցան իրենց տունները մտնել: Վարժարանին աշակերտներն տեսան իրենց հոգաբարձուներն նոյն վիճակին մէջ եւ իրենք ալ գինետուն մը մտնելով՝ մէյմէկ հատ տնկեցին ի փառս սրբոյն Ստեփանոսի նախավկային:

Եկեղեցին երեք քահանայ ունի, որք խօսք կ'առնեն այն խնդիրներու մէջ՝ որք հարսանիքի, կնունքի կամ ննջեցեալի հետ վերաբերութիւն ունին. ուրիշ խնդրոյ մը վրայ խօսք բացուած ժամանակ կքնանան:

Թաղեցին ալ շատ հոգ չտանիր իւր վարժարանին ու եկեղեցոյն, միայն *տիւզ* օղիին վրայ է իւր խելքը: Թոք գաբուցին միշտ մինչեւ առաւօտ կնստի գինետունը, իւր առջեւն ունենալով *տիւզի* հետ քիչ մը եփած լուբիա կամ քիչ մը պտուղ՝ եթէ ոստիկաններ չգան ժամը երեքին եւ գինետան դուռը զարնելով՝ դուրս չհանեն զայն գինետունէն: Իւր խօսակցութիւնը եղանակով է, կա՛մ *շարզը* պիտի կանչէ կամ *մանի*: Ազգային գործերուն վրայ բան մի՛ հարցուներ իրեն, վասնզի սովորութիւն չունի ատանկ բաներու վրայ խօսելու: Իսկ եթէ Կլատսթըն, Պիքօնսֆիլտ, Կրանվիլ